ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1466-Ա « 18 » ապրիլի 2024թ.

ԱՐՄԱՆ ՏԵՐ-ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ
«ՋՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասի 4-րդ կետով, 112-րդ հոդվածով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Ջրային Կառույցների» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.1-ին կետով և հիմք ընդունելով Արման Տեր-Թովմասյանի դիմումը՝

1.Արման Տեր-Թովմասյանին՝ 2024 թվականի ապրիլի 19-ից ազատել «Ջրային Կառույցների» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից՝ աշխատանքային վերջին օր համարելով 2024 թվականի ապրիլի 19-ը:

2.«Ջրային Կառույցների» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն ընկերության գլխավոր հաշվապահ Բագրատ Ասլիկյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ